ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2016 թվականի **թիվ 26** քաղ. Սանկտ Պետերբուրգ

Շուկան անդրսահմանային համարելու չափանիշներում փոփոխություններ կատարելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 74-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց**.

1. Շուկան անդրսահմանային համարելու՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 29 որոշմամբ հաստատված չափանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
բարձրագույն խորհրդի
2016 թվականի դեկտեմբերի 26-ի
թիվ 26 որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շուկան անդրսահմանային համարելու չափանիշներում կատարվող

1. 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Սույն չափանիշները մշակել են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 74-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա եւ Պայմանագրի 76-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան կիրառվում են Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից մրցակցության ընդհանուր կանոնների խախտումները կանխարգելելու հարցում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի իրավասությունը որոշելու նպատակով (այսուհետ համապատասխանաբար՝ տնտեսվարող սուբյեկտներ, անդամ պետություններ)»:

2. Տեքստում՝

համապատասխան հոլովով «Կողմեր» բառը փոխարինել համապատասխան հոլովով «անդամ պետություններ» բառերով.

համապատասխան հոլովով «Կողմերի տնտեսվարող սուբյեկտներ (շուկայի սուբյեկտներ)», «տնտեսվարող սուբյեկտներ (շուկայի սուբյեկտներ)» բառերը փոխարինել համապատասխան հոլովով «տնտեսվարող սուբյեկտներ» բառերով:

3. 2-րդ կետում՝

«միասնական» բառը փոխարինել «ընդհանուր» բառով.

«Համաձայնագրի III բաժնով» բառերը փոխարինել «Պայմանագրի 76–րդ հոդվածով» բառերով:

4. 3-րդ կետում՝

առաջին պարբերությունում «Համաձայնագրի 13-րդ հոդվածով» բառերը փոխարինել «Պայմանագրի 76-րդ հոդվածի 2-րդ կետով» բառերով.

երկրորդ պարբերությունում «տարածքում» բառը փոխարինել «տարածքներում» բառով:

5. 4-րդ կետում՝

առաջին պարբերությունում «Համաձայնագրի 10-րդ հոդվածով» բառերը փոխարինել «Պայմանագրի 76-րդ հոդվածի 3-5-րդ կետով» բառերով.

երկրորդ պարբերությունում «տարածքում» բառը փոխարինել «տարածքներում» բառով:

6. 5-րդ կետում՝

առաջին պարբերությունում «Համաձայնագրի 12-րդ հոդվածով» բառերը փոխարինել «Պայմանագրի 76-րդ հոդվածի 1-ին կետով» բառերով.

երկրորդ պարբերությունում՝ [փոփոխությունը վերաբերում է միայն ռուսերենին].

երրորդ պարբերությունում «տարածքում» բառը փոխարինել «տարածքներում» բառով.

հինգերորդ պարբերությունում՝ [փոփոխությունը վերաբերում է միայն ռուսերենին].

ութերորդ պարբերությունում «տարածքում» բառը փոխարինել «տարածքներում» բառով:

7. 6-րդ կետում «Կողմերի բնական մենաշնորհներին վերաբերող համաձայնագրերով, այդ թվում՝ ոլորտային նշանակություն ունեցող (ճյուղային) համաձայնագրերով սահմանված» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում կնքված Պայմանագրով եւ (կամ) միջազգային պայմանագրերով նախատեսված» բառերով:

8. Տողատակի ծանոթագրությունից հանել «(շուկայի սուբյեկտներին)» բառերը: